№ 109 Յունիսի 19 Հաբաթ 1882 Յունիսի 19 Հաբաթ № 109

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

# ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
*Тифлисъ. Редакція «Мшакъ»*

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Երևանից։— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Անգլիա։ Ֆրանսիա։ Նամակ Շվեյցարիայից։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։— ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խամսայի Մէլիքութիւններ։

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Յունիսի 9-ին

Մի շատ տխուր զգացմունք պատում է մարդու սիրտը, երբ, գալով Երևան, ծանօթանում էք այստեղի երիտասարդութեան հետ։ Գնում էք, դուրս գալի այգին, տեսնում էք չորս կողմը նստոտած «ջահիլ» տղերք։ Մօտենում էք դրանց և տեսնում, որ նստած կամ մէկին բամբասում են, կամ մէկի վրա ծիծաղում։ Զայրացած այդ խմբից զբնում էք մի ուրիշի մօտ և տեսնում մի և նոյնը, լսում էք մի և նոյնը և դարձեալ տխուր զգացմանց տակ հեռանում այդ տեղից։ Գուցէ հարցնէք. մթթէ դրանք պարապմունք չունեն։ Այո, դրանցից մի քանիսը բոլորովին պարապ ման են գալիս։ Մարդ զարմանում է տեսնելով, որ ահագին մարդիկ առաւօտից մինչև երեկոյ այստեղ նստում, այնտեղ պառկում և այդպէսով օր անցնում։ Գոնէ ժամանակ անցնելու համար մի գիրք կամ լրագիր կարդային,—ոչ, Աստուած մի արասցէ.... Դրանք համարեա բոլորն էլ ունեն միւլքեր և իրանց օրինակով ցոյց են տալիս, թէ երբեմն ապահովված կեանքը ինչ հետևանք է ունենում մարդու համար։

Միւս դասակարգի երիտասարդները աւելի գործունեայ են։ Դուրս գալով գիմնազիայից առաջին, երկրորդ դասատներից, նրանք իրանց գործունէութեան ասպարէզ ընտրում են «ծառայութիւնը» և կամ աւելի լաւ ասած «թանաք լիզելը»։ Նրանք զառնում են դրագիրներ։ Ամբողջ օրը գլուխները կռած, կուրծքները սեղմին դէմ տուած, նրանք գրում են, գրում և իրանց աշխատանաց վարձը սահմանում են 5-ից սկսած մինչև 25 ռուբլի։ Ի հարկէ այս վերջին գումարը շատ քիչ ընտրեալների բաժին է, միայն որոնք մի որ և է բաղդաւոր հանգամանաց մէջ են.... Այս «ծառայութիւնը» խլելով ամենալաւ ժամանակը, ոչնչով չէ նպաստում մտաւոր զարգացմանը և շատ վնասակար է առողջութեանը, բայց ինչ արած, որ նրանք այս պարապմունքը աւելի գերադասում են հողագործութեամբ, գինեգործութեամբ, կամ արհեստներով պարապելուց։ Սրանցից շատերը ունեն այգիներ և ոչ ոք չէ ուզում սովորել գինեգործութիւն, որ կարողանայ Երևանի պատուական հաղորդից լաւ գինիներ պատրաստել։ Մի ֆրանսիացի եկել է Երևան և պատրաստում է մի նոր գինի, որի շիշը ծախվում է 40 կ., չը նայելով որ շատ չէ զանազանվում Երևանի բնական գինուց, որի շիշը ծախվում է միայն 10 կ.։ Բայց ինչ է ստիպում այդ երիտասարդներին մտնել գբրագիր։ Ոմանց այս պաշտօնի յարգոյ բնաւորութիւնը. քանի նրանց աղա են կոչում, նրանց սրտին մի թիզ իւղ է նստում։ Միւսներին ուրիշ պարապմունքի չը լինելը և մի քանիներին հողագործական ուսումնարանների բացակայութիւնը։ Շատերը, եթէ ուզենային էլ հողագործութեամբ կամ արհեստներով պարապել, աղքատութեան պատճառով չեն կարողանում գնալ ուրիշ տեղ սովորելու։ Եւ իսկապէս, Երևանի պէս նահանգում, որտեղ ամենագլխաւոր արդիւնաբերութիւնը՝ հողագործութիւն, գինեգործութիւն և այգեգործութիւն է, աւելի հարկաւոր է այդպիսի մի ուսումնարան, քան կլասիքական գիմնազիա և ուսուցչական սեմինարիա։ Ի հարկէ, այդ ուսումնարաններն էլ ունեն իրանց կարևորութիւնը, միայն ոչ ընդհանուրի համար, մինչդեռ հողագործական ուսումնարանը ընդհանուրի համար էլ օգուտներ կը բերէր և գուցէ երիտասարդներից շատերին էլ ազատէր այն շրջանից, որի մէջ նրանք հիմա գտնվում են։

Այդ վերևում իմ նկարագրած երիտասարդները ցերեկով մի քանի ժամ միմեանցից բաժանվելով, գիշերը միանում են և անցնում միատեղ, միասին հարբում են և այլն....

Եւ այդպիսի կեանքի հետևանքը արդէն երևում է։ Այդ երիտասարդների գոյնը դեղին է, շատերը արդէն վարակված են վեներական ախտերով և ամուսնութեան միջոցով անդիտակցաբար տարածում են հասարակութեան մէջ այդ ախտը։

Առողջ են միայն Երևանի արհեստաւորները և մասամբ էլ վաճառականութեամբ պարապող երիտասարդները։

Մի տխուր և շատ տխուր զգացմունք է տիրում մարդու մէջ, երբ մտածում է ապագայ սերունդի վրա, թէ որքան պիտանացու պէտք է լինի նա հասարակութեանը և ազգին։ Խօսք չը կայ, որ Երևանում կան և եռանդոտ, առաջադիմութիւն սիրող երիտասարդներ, որոնք աշխատում են պատերազմել միտների խաւարասիրութեան դէմ, բայց նրանց վիճակը այստեղ էլ նոյնն է, ինչ ամենայն տեղ և այս բացառութիւնները աւելի էլ ցոյց են տալիս միտների վատութիւնը։

Մ. Ց.

## ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ԱՆԳԼԻԱ

Գլադստոն այնքան աշխատեց, որ անգլիական համայնքների ժողովը 253 ձայների մեծամասնութեամբ 27-ի դէմ ընդունեց նրա առաջարկութիւնը, որ իրլանդական ֆերմերների ապառիկների օրինագիծը քննվի անմիջապէս իրլանդական արտաքոյ կարգի օրէնքների քննութիւնից յետոյ, գրում է „Голосъ“։ Եգիպտական անկարգութիւնները չեն արգելում ազատամիտ մինիստրութեան առաջնորդին յամառութեամբ ձգտել այն նախագծի օրէնսդրական վաւերացմանը, որ նա ամենալաւ միջոց է համարում Իրլանդիան խաղաղացնելու համար։ Դուբլինի մէջ կատարված սպանութիւններից յետոյ աւելի էլ խըճճված այդ դժուար գործի աջողութեանը Գլադստոն հաւատում է քաղաքական ֆանատիկոսի յամառութեամբ, որ հաւատացած է, թէ իր հայեացքները և կարծիքները այս կամ այն հարցի մասին անպայման ճիշդ են։ Նրան չեն շփոթեցնում ոչ կաթոլիկական նոր ապանութիւնները, որոնք կատարվել են Իրլանդիայի մէջ վերջին ժամանակներում, ոչ զէնքերի մի ամբողջ պահեստի գտնելը, որոնք նշանակված էին բացարձակ ապստամբութեան համար։ Ստիպողական օրէնքները, իրլանդական հողագործների ապառիկների ներումը, պարլամենտական վիճաբանութիւնների ձևի փոփոխելը, որի նպատակն էր միջոց չը տալ իրլանդական աֆտոնոմիստներին դիմամբ երկարացնել վիճաբանութիւնները, մինիստրութեան առաջնորդը աջողութեան մինչև այն աստիճան անհրաժեշտ պայմաններ է համարում, որ ակնարկում է պարլամենտին, թէ ինքը ստիպված կը լինի դիմել „Օրինական միջոցներին“, որպէս զի լօրդերի ժողովը չը կարողանայ յիշեալ վերանորոգութեան քննութիւնը յետաձգել մինչև պարլամենտական աշխատանքների հետևեալ շրջանը։

Լօրդերի ժողովի վերաբերութեամբ միայն մի „օրինական միջոց“ կարելի է գործադրել, որից Գլադստոն մինչև այժմ հրաժարվել է։ Ստիպել լօրդերին, որ նրանք հաւանութիւն տան համայնքների ժողովի ընդունած օրինագիծներին, կարելի է փոփոխելով լօրդերի ժողովի այժմեան մեծամասնութիւնը։ Դրա համար Գլադստոն կարող է լօրդերի ժողովի անդամներ նշանակել անգլիական ազատամիտներին։ Շատ հաւանական է, որ Գլադստոն այս անգամ էլ օգուտ չի քաղի իր այդ իրաւունքից և ակ-

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԽԱՄՍԱՅԻ ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

XXVIII.

Ռուս-տաճկական երկրորդ պատերազմի հետ (1787—1791) մի և նոյն ժամանակ ծագեց չվեդական պատերազմը։ Ռուսաց կառավարութիւնը այն աստիճան զբաղված էր այդ պատերազմներով, որ ամենևին ժամանակ չունէր մտածելու Անդրկովկասի քրիստոնեաների վրա, թէև այդ վերջինները անդադար տեղեկութիւններ էին տալիս իրանց աննախանձելի դրութեան մասին։ Իշխան Պոտեմկինը և Յովսէփ արք-եպիսկոպոսը մատակցում էին ռուսաց արշաւանքներին. դրանք ևս, որ խիստ հետաքրքրված էին Անդրկովկասով, այդ ժամանակ հաղիւ թէ կարող էին իրանց ցանկութիւնները իրագործել։

Իսկ վերոյիշեալ պատերազմների ընթացքում, որպէս տեսանք, Ղարաբաղում կատարվեցան մի շարք աղէտալի անցքեր։ Իբրահիմ-խանը ձեռք բերելով հայոց մէլիքների ռուսաց հետ ունեցած թղթակցութիւնները, սկսեց հալածել նրանց։ Նոյն խանի ձեռքով Յովհաննէս կաթողիկոսը սպանվեցաւ, Գանձասարի վանքը կողոպտվեցաւ, Տիղակի Մէլիք-Բախտամը աքսորվեցաւ, Խաչէնի Հասան-Ջալալեաններից երկու մէլիքներ սպանվեցան, և ամենացաւալին այն էր, որ նշանաւոր մէլիքներից երկուսը, Մէջլումը և Աբովը, իրանց ժողովրդի հետ դուրս եկան Ղարաբաղից, այնտեղ մնացին կամ խանին համակրող, կամ նրանից վախեցող մէլիքները։

Այդ բոլոր տխուր անցքերը առիթ տուին Յովսէփ արք-եպիսկոպոսին շտապելու, կրկին ողորմած Կայսրուհու ուշադրութիւնը դարձնելու հայերի վրա։

Այդ ժամանակ արք-եպիսկոպոսը կազմեց իր նշանաւոր պատմական տեղեկագիրը, որ բովանդակում էր իր մէջ Ղարաբաղի տիրապետող մէլիքների յարաբերութիւնները ռուսաց կառավարութեան հետ, սկսեալ Պետրոս մեծի օրերից, և նրանց մատուցած նշանաւոր ծառայութիւնները Ռուսաստանին, և հասցրեց մինչև իր օրերը։ Յիշեալ տեղեկագիրը իշխան Պոտեմկինի միջնորդութեամբ ներկայացվեցաւ Կայսրուհուն 1790—23 յունվարի։

Այդ տեղեկագիրը իր առանձին աղդեցութիւնն ունեցաւ։ Օսմանցոց հետ ունեցած պատերազմը միայն արգելք էր լինում Կայսրուհուն Անդրկովկասի քրիստոնեաների վերաբերութեամբ մի վճռական գործ սկսելու։ Այդ պատճառով եռանդոտ արք-եպիսկոպոսի խնդիրքները յետաձգվում էին, յուսադրելով նրան, թէ իր բաղձանքները կը կատարվին, միայն հարկաւոր է փոքր ինչ համբերել։

Բայց մի ցաւալի կորուստ թէ արք-եպիսկոպոսին և թէ Ղարաբաղի մէլիքներին սաստիկ յուսահատութիւն պատճառեց։ Թուրքաց պատերազմը վերջանալու վրա էր, երբ իշխան Պոտեմկինը կուբի-դաշտից կանչվեցաւ Ս. Պետերբուրգ, և ապա կրկին յետ ուղարկվեցաւ (1791) Թուրքերի հետ հաշտութեան պայմանների մասին բանակցելու համար։ Նոյն տարվայ աշնան սկզբումը իշխանը վախճանվեցաւ։ Նրա մահը սուգի մէջ դրեց հանդուցեալի մտերիմ բարեկամ Յովսէփ արք-եպիսկոպոսին։ Սրբազանը ոչինչով իրան մխիթարել չէր կարողանում. նա իր հիմնած մեծ շէնքը բոլորովին կործանված էր համարում և նրա աւերակների տակ խորտակված էր տեսնում իր սրտին խիստ մօտ ցանկութիւնները...

1791 թուի դեկտեմբերի 29-ին հաշտութեան պայմանը ստորագրվեցաւ Ռուսաստանի և Թուրքիայի մէջ։ Կայսրուհին կրկին ուշադրութիւն դարձրեց Անդրկովկասի վրա։ Այդ ժամանակ թէ հայերը և թէ վրացիները աւելի մեծ տագնապի մէջ էին։ Պարսկաստանում զօրացել էր Աղայ-Մամադ-խան ներքինին, և մի քանի տարի անդադար արշաւանքներ էր գործում դէպի Արարատեան նահանգը, վտանգ էր սպառնում Վրաստանին։ Վրաց Հերակլ իշխանը մի կողմից, Թիֆլիսի հայերը միւս կողմից, սարսափած ներքինի-խանի բարբարոսութիւններից, սկսեցին օգնութիւն խնդրել։ 1795—4 սեպ. բարձրադոյն հրամարտակով հրամայվեցաւ կոմս Գուդովիչին, ռուսաց զօրքով օգնութեան հասնել և պաշտպանել Վրաստանը։ Բայց նա ուշացաւ....

XXIX.

Աղայ-Մամադ-խանի արշաւանքները։

Կուրացրած Շահ-Ռուխից յետոյ Պարսկաստանը ամբողջ ութն տարի խռովութեան մէջ էր, կեղեքվում էր զանազան ինքնիշխան տիրապետողների ձեռքում, որոնք շարունակ միմեանց հետ պատերազմելով, երկիրը դարձրել էին արեան ընդարձակ դաշտ։ Այդ տիրապետողները էին՝ Ալի-Մուրադ-խանը, զէնդ-Քէրիմ-խանը, Աղատ-խանը, Մուհամէդ-Հասան-խանը և ուրիշ շատերը։

Վերջը յաղթող հանդիսացաւ լօրիստանցի զէնդ Քէրիմ-խանը, նստեց Շիրազ քաղաքում, թէև ոչ իբրև թագաւոր, բայց Պարսկաստանի իշխող։ Այդ միջոցներում նրա մօտ իբրև պատանդ Շիրազ քաղաքում պահվում էր ներքինիացրած Աղայ-Մամադ-խանը, որը վերոյիշեալ Մուհամէդ-Հասան-խանի որդին էր, ցեղով ղաջար, իսկ տեղով մազանդարանցի։

Քերիմ-խանի մահից յետոյ (1779) Աղայ-Մամադ-խանը փախաւ Շիրազից, և գալով Մազանդարանի կողմերը, հաւաքեց իր շուրջը մեծ բազմութիւն, ապստամբվեցաւ, և տիրելով Արաղսանին, իրան պարսից թագաւոր հրատարակեց, Թեհրան քաղաքը իր համար աթոռանիստ ընտրելով *)։

1795 թուի գարնանը Աղայ-Մամադ-խանը Թեհրանից արշաւանք գործեց դէպի Ատրպատական, նուաճեց այդ պարսկական ընդարձակ նահանգը, տիրեց Թաւրիզը և ուրիշ շատ քաղաքներ, յետոյ իր եղբայր Ալի-Ղուլի-խան սարդարին ուղարկեց դէպի Երևանի կողմը։ Այդ վերջինը, տիրելով Նախիջևանը, նոյն տարվայ յուլիս ամսում, բանակ դրեց Երևանի պարիսպների մօտ։ Էջմիածնի Ղուկաս կաթողիկոսը, սարսափելով նրա մօտ եկաւ, և ներկայացնելով ծանրագին ընծաներ, աղաչում էր խնայել իր վանքը։ Ներքինի Շահի եղբայրը պատուով ընդունեց կաթողիկոսին, խոստանալով, թէ ոչ հայերին և ոչ վանքին վնաս չի

*) Աղայ-Մամադ-խանից սկսվեցաւ Պարսկաստանի այժմեան թագաւորող տան գահակալութիւնը։

նարկեց դրա մասին այն նպատակով, որ ստիպէ լորդերին չը մերժել ապառիկների ներման օրինագիծը։

Այսպէս թէ այնպէս երևում է, որ Գլադստոն շտապում է շուտով վերջացնել իրլանդական հարցի ամենադժուար մասը, որպէս զի պարլամենտական աշխատանքների այժմեան շրջանի վերջանալուց յետոյ, ինքը աւելի ազատ լինի։ Անգլիական կառավարութեան առաջնորդի այդպիսի ցանկութիւնը շատ հասկանալի է։ Եթէ մինչև ամառվայ վերջ Իրլանդիան այնքան չի խաղաղացվի, որ կառավարութիւնը ստիպված չը լինի իր ամբողջ ուշադրութիւնը կենտրոնացնել այդ երկրի գործերի վրա, այժմեան մինիստրութեան համար շատ դժուար կը լինի եգիպտական հարցի լուծումը, որ հետզհետէ խրճրճվում է։

Վերջին հարցի դժուարութիւնները ակներև են դարձնում արտաքին գործերի մինիստրի օգնական Զարլզ Դիլկի վերջին յայտնութիւնները համայնքների ժողովի մէջ։ Այս անգամ մինիստրը խոստովանեց, որ Ալէքսանդրիայի մէջ կատարված անկարգութիւնները և առհասարակ եգիպտոսի մէջ սկսված հակաեւրոպական շարժումը մեծ ազդեցութիւն ունեցան անգլիական կառավարութեան նախագծերի վրա։ Կառավարութիւնը, յետ չառնելով իր առաջվայ յայտնութիւնները եգիպտական գործերի մասին և պատասխանատու լինելով իր վարմունքի համար, խոստովանվում է, որ ներկայ բօպէի նշանաւոր խնդիրը եգիպտոսի մէջ ապրող եւրոպացիների կայքերի և անձնական ապահովութիւնն է, „որ անկարելի է ձեռք բերել առանց այն անձանց մասնակցութեան, որոնց ձեռքին է եգիպտոսի կառավարութիւնը“։ Ուրիշ խօսքերով այդ կը նշանակէ. անգլիական կառավարութիւնը այլ ևս անհրաժեշտ չէ համարում Արաբի-փաշայի հեռանալը եգիպտական մինիստրութիւնից և յետաձգում է վճռողական միջոցների գործադրութիւնը մինչև այն ժամանակ, երբ ոչինչ վտանգ չի սպառնայ եւրոպացիների կայքերի և անձնական ապահովութեանը։ Այդ գործի համար անկասկած բաւական ժամանակ է հարկաւոր, մանաւանդ եթէ հանգստութեան վերականգնելը Եգիպտոսի մէջ կապ կունենայ Կ. Պոլսի մէջ գումարվելի կոնֆերենցիայի աշխատանքների հետ։ Ակներև է, որ անգլիական կառավարութիւնը հաշվում է գործի յետաձգութեան հետ, որովհետև նա յանձնեց իր գլխաւոր հիւպատոսին Եգիպտոսի մէջ յայտնել եգիպտական կառավարութեանը, որ Անգլիան առ ժամանակ բաւականութիւն չի պահանջի Ալէքսանդրիայի անկարգութիւններից վնասված իր հպատակների համար, բայց այնու ամենայնիւ նա ապագայում բաւականութիւն կը պահանջի յիշեալ բռնութիւնների համար։ Ուրեմն եգիպտական հարցը չէ կարող վճռվել մինչև աշունք և շատ հասկանալի է Գլադստոնի ցանկութիւնը մինչև այդ ժամանակ ազատվել իրլանդական հարցի դժուար կողմերից։

## ՖՐԱՆՍԻԱ

Փարիզից յունիսի 17-ից հեռագրում են „Köln. Zeitg.“ լրագրին։ Մինիստրների խորհրդի նախագահ և արտաքին գործերի մինիստր Ֆրէյսինէ հաղորդեց ազատ մինիստրների խորհրդին այն շրջաբերականը, որ նա ուղարկեց Ֆրանսիական դեսպանին Կ. Պոլսի մէջ։ Այդ գրութիւնը նոյն բովանդակութիւնն ունի, ինչ որ Գերմանիայի, Անգլիայի, Աւստրօ-Ունգարիայի, Ռուսաստանի և Իտալիայի շրջաբերականները, որոնցով յիշեալ պետութիւնները առաջարկում են Բ. Դրան յայտնութիւն անել իր մասնակցութեան մասին Կ. Պոլսի մէջ գումարվելի կոնֆերենցիային։ Բ. Դրան պատասխանը Ֆրանսիական կառավարութեանը դեռ ևս պաշտօնապէս յայտնի չէ, բայց տարածված լուրերին նայելով, երևի հետևալը կը լինի. Բ. Դուռը ընդդէմ չէ կոնֆերենցիայի բացմանը. բայց չէ կարող նրան մասնակցել։ Բ. Դուռը չի հրաժարվի քննադատել և ի նկատի առնել այն վճիռները, որոնց կը կայացնի կոնֆերենցիան։ Այժմ պետութիւնները վճռել են երկարացնել Բ. Դրանը տուած 48 ժամ ժամանակամիջոցը։ որպէս զի նա կարողանայ փոխել իր վճիռը և պատրաստականութիւն յայտնէ մասնակցել կոնֆերենցիային։ Ֆրէյսինէ համոզմունք յայտնեց, որ Բ. Դուռը վերջ ի վերջոյ կընդունի առաջարկութիւնը, որ արված է բոլոր պետութիւններից, մանաւանդ որ Գերմանիան ցանկանում է թիւրքիայի մասնակցութիւնը կոնֆերենցիային։ Սպանիան նոյնպէս ցանկանում է մասնակցել կոնֆերենցիային և Ֆրանսիան այդ բանի դէմ ոչինչ չունի, իսկ մնացած պետութիւնների կարծիքները դեռ յայտնի չեն։ Այնուհետև Ֆրէյսինէ ներկայացրեց մինիստրների խորհրդին վերջին հեռագիրները Եգիպտոսից, որոնք հաղորդում են, թէ խեդիվը չէ կամենում վերադառնալ Կայիրէ և թէ Բահիր-փաշա համաձայնվել է նոր մինիստրութիւն կազմել։

## ՆԱՄԱԿ ՇՎԷՅՑԱՐԻԱՑԻՑ

Ցիւրիխ, 6 յունիսի

Ներկայ յունիսի 8-ին բաղդունեցայ Ցիւրիխի պոլիտեխնիկայի 200-ի չափ ուսանողաց և մի քանի պրոֆեսսորների հետ Սան-Գոտտհարդի երկաթուղով դէպի Միլան երթալու։ Առաջ քան կը նկարագրէինք այդ մարդկային հանձարի հրաշափառ ծնունդը, աւելորդ չէ Սան-Գոտտհարդի պատմական անցեալը չօչափել։

Սան-Գոտտհարդի լեռնային անցքը վաղուց ի վեր կազմում էր միակ հաղորդակցութեան ճանապարհը Շվէյցարական հին կանտոնների և Լոմբարդիայի դաշտավայրի մէջ։ Հռոմայեցւոց յայտնի չէր այդ ճանապարհը, որովհետև Յուլիոս Կեսարի զօրքերը Մոն-Սէնիի և Սան-Բէրնարդի վերայով անցան։ Աւանդութեանը նայելով լանդօբարդները առաջինը պիտի եղած լինին, որք VI դարում Հելուէտեան խաղաղ հովիտները ասպատակելու նպատակաւ Գոտտհարդը անցան։ Աւելի որոշ տեղեկութիւններ երևում են խաչակրաց ժամանակից, սակայն ոչ այդ օրերում և ոչ աւելի ուշ լեռնականների մէջ առուտուրի պատճառով ծագած պատերազմների ժամանակ, որ և իցէ չէնք կամ հիմնարկութիւն իրրև ապաստան ճանապարհորդների չը կար վերևը։

Աւանդութիւնը դարձեալ մեզ ասում է որ XI դարում Բենեդիկտեան կրօնաւորը ի պատիւ իրանց Գոտէհարդուս եպիսկոպոսի մի փոքրիկ մատուռ չինեցին, ուստի այնուհետև այդ լեռների խումբը (որոց ամենաբարձր իշխող գագաթն է Pizzo-Rotondo), որ հնում Mons Elvelinus էր կոչվում, իր այժմեան անունը ստացաւ։ Առաջին ընդունարանի կամ հիւրանոցի (Hospiz) շինութիւնը վերաբերում են Ացցո-Վիսկոնտի Միլանի դքսին, որին նա իր ոսկրացաւից ազատվելու համար և 'ի պատիւ սուրբ Գոտտհարդի 1317-ին ձեռնարկեց։ Հաստատ յայտնի է, որ 1374-ին անցքի ամենաբարձր կէտում կանգնած էին հիւրանոց և մատուռ։

Կարլոս Բօրրոմէոս Միլանի արքեպիսկոպոսը 1560-ին աւելի ընդարձակեց շէնքը և եկամուտը յատկացրեց մի մշտակեաց քահանայի։ 1629-ին հին շէնքը նորոգվեցաւ ուր երկու կապուցինեան կրօնաւորք բնակվեցան։

1683-ին, երբ Աւստրիան տաճիկներով լցված էր, կրօնաւորների մեծ բազմութիւն պատսպարվեցաւ այստեղ։ Այդ միջոցին խուռն երթևեկութիւն կար Գոտտհարդի անցքի վրայօք։ Հիւսիսից անթիւ վաճառականների հետ միասին գնում էին բազմաթիւ չվեյցարացիք դէպի հարաւ իրանց ծառայութիւնը իբրև զինուոր այս կամ այն իշխանին առաջարկելու. հարաւից գալիս էին մեծ բազմութեամբ մուրացկան կրօնաւորներ, արուեստագէտներ, երգիչներ, մանաւանդ այսպէս անուանեալ «Վենետիկցիք» կամ գանձախնդիրներ (Krystalsucher, Schatzgräber)։ Մարդիք տակաւին գաղափար չունէին այդ սարերի բօմանտիքական գեղեցկութեան վրա, այլ կարծում էին թէ այդ ձորերն ու ապառաժները դիւական հրէշների բնակարան են, ուստի ելնելիս իրանց կակը անում էին, կարծելով, որ մի անդառնալի ճանապարհն են գնում։ 1775-ին ձիւնաշեղջեր (avalanches) խորտակեցին հիւրանոցը և միմիայն 1779-ին կանգնեցան մի եռայարկ տուն և մի չտեմարան կապուցինեան կրօնաւորաց հսկողութեան տակ. սոցա ընկերացաւ և մի պանդոկապետ Այրօլօ գիւղից։ Վանքի եկամուտը կազմում էին նուիրատուութիւնք թէ մասնաւոր անձանց և թէ մերձակայ գիւղի համայնքի կողմից, ընծաներ հարուստ ճանապարհորդների կողմից և այլն։ Բայց խեղճ կրօնաւորների և պանդոկապետի կեանքը կեանք չէր, տանջանք էր, որովհետև Գոտտհարդի անցքը սկզբում մի հասարակ ոտքի չափիլ էր, որ տեղ տեղ 1353-ին չորս մետր լայնութեամբ ճանապարհ դարձաւ, ահագին բարձրութեան վրա *) ուր ոտին ամիս իշխում է սարսափելի ձմեռ. չարունակ բուք, ձիւն, քամիներ. վատ եղանակին անդադար հնչվում էին վանքի զանգակները ճանապարհից մոլորվածներին հրավիրելու և խեղճ վանականք, օրը քանի անգամ, այն դաժան եղանակին վազվզում էին անցքի վրա, որ և իցէ ձիւնախեղդ կամ ցրտաւար ճանապարհորդ անխուսափելի կորուստից ազատելու համար։ Բերելով հիւրանոց նորան կազդուրում

*) 2093 մետր, աւելի քան 7300 ոտնաչափ ծովի մակերևոյթից։

---

հացնի, եթէ հայերը հաւատարիմ կը մնան Պարսկաստանին, ինչպէս միշտ եղել են։

Երևանը առանց պատերազմի անձնատուր եղաւ. տեղային խանը իր կնոջը և որդիներին պատանդ տալով, հպատակութիւն խոստացաւ։ Այդ միջոցին ինքը Աղայ-Մամադ-խանը, ուրիշ ճանապարհով դիմում էր դէպի Ղարաբաղի կողմերը, որ այնտեղից անցկենայ Թիֆլիս։ Նա խուզափիրլինի կամրջով անցաւ Երասխ գետը, և լուր տուեց եղբօրը, որ դադարեցնէ արշաւանքը Երևանի կողմով և շտապէ իր մօտ։ Երկուսի նպատակն էլ այն էր, որ նուաճէին Վրաստանը, պատժէին Հերակլ իշխանին։

Պէտք է ի նկատի ունենալ, որ Վրաստանը այն ժամանակ և նրանից առաջ, ուրիշ ոչինչ չէր, եթէ ոչ մի պարսկական նահանգ, որ հարկ էր վճարում Պարսկաստանին։ Նրա մի մասը օսմանցիների ձեռքումն էր և Ախալցխայի մէջ նստած էր Թիւրք փաշայ։ Իսկ երբ Հերակլը, պարսիկներից ազատվելու համար, Վրաստանը դրեց ռուսների հովանաւորութեան ներքոյ,—նրա վարմունքը, ի հարկէ, չէր կարող չը զրգռել պարսից Շահի բարկութիւնը, որը ճանաչում էր Վրաստանը իրրև պարսից պետութեան մի մասը, իսկ վրաց իշխաններին՝ իրրև պարսից Դրնից նշանակված կառավարիչներ կամ վալիներ։

Աղայ-Մամադ-խանը մտադիր էր անցկենալ դէպի Թիֆլիս, Ղարաբաղի և Գանձակի գաւառների միջով։ Ահարկու ներքինիի արշաւանքը մի նոր և ամենասաստիկ հարուած պիտի տար Ղարաբաղի մէլիքների նպատակներին և միանգամայն պիտի ոչնչացնէր նրանց ունեցած յոյսերը իրանց հայրենիքի ազատութեան մասին։ Նրանք վաղուց իմացում էին տուել ռուսաց կառավարութեանը ներքինիի դէմ Հայաստան և դէպի Վրաստան կատարելիք արշաւանքի մասին *)։ Թէև կոմս Գուդովիչին հրամայված էր հայերին և վրացիներին օգնութեան հասնել, բայց Աղայ-Մամադ-խանի բանակը արդէն դրած էր Շուշի բերդի մօտ, իսկ կոմսը տակաւին չէր յայտնվել։

Պէտք չէ մոռանալ, որ Աղայ-Մամադ-խանը, թէև սիրում էր իր նախկին «խան» տիտղոսով կոչվել, բայց նա արդէն Պարսկաստանի ինքնակալ Շահն էր։ Նրան յայտնի էին Ղարաբաղի մէլիքների ձգտումները, նրանց յարաբերութիւնները ռուսների հետ և այդ վերջինների խոստմունքները հայերի վերաբերութեամբ և այլն։ Նրան յայտնի էին նաև Իբրահիմ-խանի բռնակալութիւնը և նրա գործ դրած բարբարոսութիւնները հայերի դէմ։ Այդ էր պատճառը, որ դեռ Երասխ գետից չանցած, նա հրաման ուղարկեց Ղարաբաղի մէլիքներին, հրաւիրելով նրանց, որ խոնարհվեն իրան, խոստանալով, որ ինքը կը վերահաստատէ նրանց իրանց վաղեմի իշխանութիւնների և արտօնութիւնների մէջ, և կը ոչընչացնէ Իբրահիմ-խանին։

Աղայ-Մամադ-խանը թէև բարբարոս, բայց մի և նոյն ժամանակ խելացի և քաղաքագէտ մարդ էր։ Նա շատ լաւ հասկանում էր, որ հայերի առաջնորդութեամբ ռուսները աւելի հեշտութեամբ կարող էին մուտք գործել իր տէրութեան մէջ,—ուրեմն հայոց մէլիքներին զոհացնելով, նա կը փակէր ռուսների յառաջդիմութեան ճանապարհը դէպի Պարսկաստան։

Բայց հայոց մէլիքները աւելի բարւոք համարեցին հաւատարիմ մնալ ռուսներին, և Աղայ-Մամադ-խանին ընդդիմադրելու համար, միացան մինչև անգամ իրանց վաղեմի թշնամի Իբրահիմ-խանի հետ, մտածելով, որ նրան յետոյ հեշտ կը լինի ոչնչացնել, բայց եթէ միանգամ հպատակվեցան Աղա-Մամադ-խանին, այնուհետև հայրենիքի պարսից լծից ազատելը անհնարին կը լինի։ Միայն Մէլիք-Իսրայէլեան Մէլիք-Մէջլումը չը համաձայնվեցաւ միւս մէլիքների հետ։

Մէլիք-Շահնազարեան Մէլիք-Ջումշուդը և Մէլիք-Բէգլարեան Մէլիք-Աբովը հայոց զօրքերով ամրացան Շուշի բերդի մէջ և Իբրահիմ-խանի հետ միասին սկսեցին պաշտպանել բերդը։

Բերդի պաշարումը տևեց ամբողջ քառասուն օր։ Հայ և թիւրք զօրքերի քաջութիւնը, միացած բերդի բնական ամրութիւնների հետ, ի չիք դարձրին Աղայ-Մամադ-խանի բոլոր ջանքերը բերդը գրաւելու համար։

Այդ ժամանակ Աղայ-Մամադ-խանի բանակի մէջ իր զօրքերով գտնվում էր Մէլիք-Իսրայէլեան Մէլիք-Մէջլումը և Գանձակի Ջաւադ-խանը, որոնք երկուսն էլ Իբրահիմ-խանի թշնամիներ էին և միացած էին Աղայ-Մամադ-խանի հետ։

Մէլիք-Մէջլումի վարմունքը բացատրութեան կարօտ է։

Մէլիք-Մէջլումը ազնիւ երիտասարդ էր, բայց չափազանց վրէժխնդիր, և ոչինչ միջոցների դէմ չը դողացող թշնամուն ոչնչացնելու համար։ Մենք յիշում ենք այն սպառնալիքը, երբ Թիֆլիսից վերադարձած դուրս գալու ժամանակ, վրացի սայլապանների բերանով ուղարկեց նա Հերակլ իշխանին. «ասեցէք ձեր իշխանին, որ Մէլիք-Մէջլումը չի մոռանայ նրա հիւրասիրութիւնը»....

Այդ երիտասարդը վշտացած էր, դառնացած էր անդադար իր բարեկամներից խաբված լինելուց։ Հօր մահից յետոյ նա տարիներով չարունակ պատերազմում էր Իբրահիմ-խանի հետ։ Նրան յոյսեր էին տալիս, օգնութիւններ էին խոստանում, բայց խաբում էին...։ Վերջը դարձեալ մեծ խոստմունքներով նա հրաւիրվեցաւ Թիֆլիս, բայց Հերակլը, փոխանակ իր խոստմունքները կատարելու, կամենում էր իր հիւրին կալանաւորել և մատնել նրա թշնամու՝ Իբրահիմ-խանի ձեռքը...

Մեր նախնիաց գլուխներում տեսանք, որ ամեն կողմից խաբված, ամեն տեղից յուսահատված, Մէլիք-Մէջլումը ապաստան գտաւ իր հօր վաղեմի բարեկամի՝ Գանձակի Ջաւատ-խանի մօտ։ Նրա ժողովուրդը թողեց Ղարաբաղը և հիւրասիրվեցաւ նոյն խանի երկրում։ Ջրաբերդի հայրենազուրկ իշխանը իր ժողովրդի հետ օտար հողի վրա էր բնակվում, որպէս մի ժամանակաւոր հիւր, իսկ նրա հայրենի երկրին տիրել էր Իբրահիմ-խանը....

Մէլիք-Մէջլումը խելացի երիտասարդ էր։ Նա շատ լաւ էր իմանում, եթէ իրանց նախնիքը ունեցել են և պահպանել են Ղարաբաղի լեռների մէջ մի ինքնուրոյն հայկական իշխանութիւն,—այդ եղել է ոչ թէ քրիստոնեայ թագաւորների

---

*) Աղայ-Մամադ-խանը մի քանի անգամ պատրաստվեցաւ արշաւանք գործելու դէպի Հայաստան և Վրաստան, բայց ժամանակ չունեցաւ անցնելու Երասխ գետը, որովհետև ամեն անգամ Պարսկաստանի խորքերում նորանոր ապստամբութիւններ էին ծագում և նա ստիպված էր լինում յետ դառնալ, ապստամբութիւնները զրսպելու համար։

էին տաք կերակրով և ըմպելիքով: Հիւրանոցը մի և նոյն ժամանակ հիւանդանոց էր, ուր հիւանդները ձրիաբար մնում էին մինչև առողջանալը: Սակայն երկար չը տևեց այդ մարդասէր հիւրանոցի գոյութիւնը. 1799-ին ֆրանսիացիք ռազմական տեսակէտից աւերելու անհրաժեշտ գըտան և այնուհետև գրեթէ ամբողջ դար միմիայն աւերակներ կանգնած էին նախկին հռչակաւոր վանքի տեղ, մինչև որ հին ճանապարհը նորոգվեցաւ, նոր ընդունարան և մաքսատուն շինվեցան, փոստային և հեռագրական հաղորդակցութիւն սկսվեց: Վերջին ժամանակներս ընդունարանը տարեկան 15—20 հազար անձինք ընդունում և կերակրում էր: Ցունիս ամսից առաջ դժուար է փոստայով ճանապարհորդել, որովհետև ձմեռը խիստ է և շատ անգամ ստիպված է անցորդը 7—8 օր ընդունարանում մնալ: Վերջին ժամանակները փոստայով անցնում էին տարեկան մօտ 70,000 անձինք:

Այժմ քաղաքակրթութիւնը և մարդկային հանճարը հարթեց և այդ դժուարակոխ անցքը: Երկաթուղու բացվելու հետ ի միասին հին ճանապարհը և ընդունարանը կը դադարեցնեն իրանց գոյութիւնը և միայն պատմութեան մէջ կանմահանան իբրև անջնջելի երեսոյթներ: Դառնանք դէպի երկաթուղին:

Թէ որքան անհրաժեշտ էր շվեյցարական կանտոնների համար Իտալիայի հետ հաղորդակցութիւնը հեշտացնել, շատ պարզ է, ի նկատի ունենալով այն ահագին դժուարութիւնքը, որ ներկայացնում էին մինչև այժմ եղած լեռնային անցքերը: Վաղուց արդէն, դեռ 30-թուականներին ծնվեցաւ Ալպեան երկաթուղու գաղափարը, սակայն դեռ ոչ ոք Գոտտհարդի մասին չէր մտածում: Եղան պրոյեկտներ Մոնսենիի և Լուկմանիերի վրայով, մնացին առանց հետևանքի մինչև Ռոշշախի և Ցիւրիխի մէջ երկաթուղին բացվեցաւ: Այնուհետև շվեյցարական հին կանտոնները ժողովվելով Լուցերնում 1860 թուականին վըճռել են Սան-Գոտտհարդի վերայով երկաթուղին անցկացնել: Սոցա վճիռը ընդունեցին նաև միւս կանտոնները և 1866-ին Իտալիան իր կողմից նոյնպէս գերազանութիւն տուեց այդ գաղափարին: Կազմվեցաւ մասնաժողով, որ գլխաւոր ինժեներ Վեսլիի ձեռքը պլաններ կազմեց և ծախուց քանակութիւնը որոշեց:

Այդ ահագին ձեռնարկութեանը մասնակցողների դրամական միջոցները ի հարկէ շատ նեղ էին, ուստի վճռեցին դառնալ դէպի օտար տէրութիւնք, գլխաւորապէս դէպի գերմանական դաշնակցութիւնքը, Պրուսիա, Բէլգիա և Անգլիա:

1869 մարտի 31 հիւսիսային գերմանական դաշնակցութեան և Իտալիայի դեսպանները յայտնեցին իրանց յօժարակամութիւնը, առաջարկելով Շվեյցարիայի դաշնակցական վարչութեանը վերջնական նախագիծը կազմել: Վերջինի յորդորանքը կազմվեցաւ ընդհանուր դեսպանական ժողով 1869 սեպտեմբերի 15-ին, որոյ 15 նիստերի հետևանքն էր այն միջազգային պայմանագիրը, որին շվեյցարական դաշնակցական ժողովը 1870-ի յուլիսին (երբ Ֆրանս-գերմանական պատերազմը ծագեց) իր համաձայնութիւնը տուեց և որին միացաւ 1871 հոկտ. 28-ին նաև Գերմանական նոր կայսրութիւնը: Այդ պայմանագրի մէջ որոշվեցան ի հարկէ գծի երկայնութիւնը և այն կէտերը, որ նա պիտի չօշափէր. ի միջի այլոց որոշվեցաւ նաև շինութեան կապիտալի ամբողջ գումարը 150 միլիոն մարկ—որից 68 միլիոն պայմանակից տէրութիւնները յանձն առան վճարել (Շվեյցարիան 16 միլիոն, Իտալիան 36 միլիոն և Գերմանիան 16 միլիոն), 27 միլիոն պիտի ձեռք բերվէր ակցիաներով և 54 միլիոն—օբլիգացիաներով. վճռվեցաւ նաև, որ ամբողջ երկաթուղին, 14920 մետր երկայն մեծ տունելի հետ ի միասին, տասն տարում վերջանայ:

Երկու անձինք առանձին ուշադրութեան արժանի են այդ գործի մէջ—երկաթուղու վարչութեան նախագահ պ. Էշեր և ինժեներ պ. Ֆավր: Առաջինը ամենամեծ եռանդ և գործունէութիւն ցոյց տուեց ամբողջ գործի մէջ, երկրորդին պարտական է իր գոյութեամբ երկրագիս ամենամեծ տունելը: Ֆավրի անխոնջ աշխատութիւնը, անքուն գիշերները, կատարեալ անձնազոհութիւնը ոգևորում էր արուեստաւորների և մշակների ահագին բազմութիւնը, որք իրաւ, դժոխային տանջանքի ենթարկված էին. սակայն ափսոս որ արժանայիշատակ մարդը իր վաստակոց պտուղը չը տեսաւ: 1879-ի յուլիսի 19-ին տունելի մէջ շըրջագայելիս յանկարծ կաթված ստացաւ և մեռաւ. ամբողջ կրթված աշխարհը ողբաց նորա մահը: Բայց նորա մահուամբ գործը չը դադարեց, նրա յաջորդ ինժեներները՝ մեծ յաջողութեամբ շարունակեցին գրեթէ անընդհատ:

1876-ի գեֆիցիտը, որ 81 միլիոն մարկի էր հասնում, վախեցրեց շատերին, սակայն գծի մէջ մի քանի փոփոխութիւններ անելով և խնայողաբար վարվելով գեֆիցիտը միայն 32 միլիոն մարկի մնաց, որի 22 միլիոնը մասնակցող տէրութիւնք, իսկ 10 միլիոնը Գոտտհարդի երկաթուղու ընկերութիւնը ծածկեցին: Ծախսը իհարկէ ահագին էր, այնպէս որ իւրաքանչիւր մետրը 1,000 ֆրանկ նստեց: Ծախսերի մեծութեան գլխաւոր պատճառը տունելներն են, որոց թիւը 62 է և որոց երկայնութեան գումարը (Gesammtlänge) քառասուն մէկ և կէս կիլոմետրի է հասնում:

Երկաթուղու ամենաբարձր կէտը մեծ տունելի մէջ է և հասնում է 1,154 մետր, այսինքն աւելի քան 4,000 ոտնաչափ ծովի մակերևոյթից: Տունելը փորելու համար գործ էին դրվում Ֆերրու-ի սիստեմայով (Système Ferroux) շինված փորելու մեքենաներ (Borhmaschine), որոց շարժողը թանձրացրած օդն էր (Comprimirte Luft) որ միևնոյն ժամանակ տունելի մէջ բանող մշակներին շնչելու օդ էր մատակարարում: Խեղճ մարդիք! Ցեխի, ջրի մէջ լողալով, թոզ, կեղտ, խեղդող գազեր կուլ տալով, փոքրիկ լամպաները ձեռքը, տասն հազարի չափ ցիր ու ցան շրջում էին ողորմելիքը ուրուականների նման այդ տարտարոսի մէջ իրանց առողջութիւնն ու կեանքը մարդկութեան համար արհամարհելով!...

Երկաթուղու գեղեցկութիւնն ու հանճարեղութիւնը անհնարին է նկարագրել: Մի կողմը թողնելով այն ահագին համարձակ կամուրջներն ու վիադուկտները, որք երբեմն սարսափելի խորխորատների և գահավէժների վրա ձգված են, ամենից համարձակ ու զարմանալին տունելներն են, որոց մի քանիսը լեռան մէջ պտուտակաձև (Schraubenförmig) տարված են. բայց բոլորի թաղն ու պարծանքը մեծ տունելն է, ահագին բարձրութեան վրա, մօտ 15 կիլոմետր երկայնութեամբ և ամբողջապէս նեռի նման ուղիղ գիծ: Շոգեկառքը անցնում է ուղիղ 25 րոպէում, ներսը սաստիկ տաք ու խեղդող է, տաքութիւնը 18°-ի է հասնում: Երկաթուղու երկարութիւնն է 240 կիլոմետր, ամենամեծ թեքուածքը 26°/₀₀, մինչև թեքուածքը Ֆլիուելենից մինչև Բիասկա 18,4°/₀₀: Գիծը չօշափում է շատ սիրուն ձորեր, հովիտներ ու լճեր—Ցուգի, Ֆիրվալդշտեդի լճերը, Լագո-Մաջորէ, Լագո-դի-Լուգանո:

Այսօրուան Ալպեան երկաթուղին մարդկային հանճարի խաղաղ մրցութեան յաղթանակն է որ միջոց է տալիս եղբայրական և բարեկամական ձեռք մեկնել հարաւի և հիւսիսի ահագին լեռներով բաժանված որդոցը:

Յովհաննէս Լալայեան

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Լրագիրներին հեռագրում են յունիսի 10-ին: Համայնքների ժողովում Նորզկօտ յայտնեց, որ ինքն առաջին մինիստրին կը հարցնի—ուղիղ է արդեօք, որ Բ. Դուռը դեռ բողոքում է կոնֆէրէնցիայի դէմ: Եթէ այդ այդպէս է, ուրեմն կառավարութիւնը պնդում է, որ կոնֆէրէնցիա կայանայ. ումից պէտք է վարձատրութիւն պահանջել Բրիտանական հիւպատոսների թէ կեանքով և թէ կարողութիւնով կրած ձեռանների համար Ալէքսանդրիայում. և Անգլիան ում վրա է յոյս դնում կարգը և հանգստութիւնը վերականգնելու համար Եգիպտոսում:

—Միջազգային հեռագրական ընկերութեանը Ալէքսանդրիայից հեռագրում են յունիսի 10-ին, որ Դերվիշ-փաշան երէկ սուլթանից մէկ հեռագիր ստացաւ, որի մէջ նա հրամայում է հաղորդել Արաբի-փաշային, որ ինքն բաւական է նրա գործունէութեան եղանակից: Հեռագիրը հրամայում է Դերվիշին ամեն ջանք գործ դնել Արաբի-փաշային դրդելու գալ Կ. Պոլիս մինչև կոնֆէրէնցիայի առաջին նիստը: Այդ բանի հետ միաժամանակ սուլթանը մի ուրիշ հեռագրով յայտնում է խէդիվին իր բաւականութիւնը նրա բռնած դըրութեան վերաբերութեամբ և հաւատացնում է, որ իր կողմից ամեն հնարաւոր միջոց գործ կը դնի խէդիվի իշխանութիւնը ամրացնելու համար:

—«Բէյտերի ընկերութեանը» Ալէքսանդրիայից հեռագրում են, որ Արաբի-փաշա և ուրիշ մինիստրներ դեռ ևս այնտեղ են գտնվում: Գաղթող եւրոպացիների թիւը պակասում է: Նոր մինիստրութիւնը պաշտպանում են գերմանական, աւստրիական և իտալական դիպլոմատիական գործակատարները, որոնք հաւատացնում են, թէ խէդիվի և զինուորական կուսակցութեան մէջ կայացած հաշտութիւնը կատարեալ է: Աւստրիական գործակատարը չէ խոստանվում, որ ինքն խորհուրդ էր տալիս աւստրիացիներին Եգիպտոսը թողնել: Վերջին կոտորածների մասին կազմած քննիչ յանձնաժողովը բաղկացած է միայն տեղացի պաշտօնեաներից: Ենթադրութիւն կայ մէկ այսպիսի յանձնաժողով նշանակել, որի թւում կը լինեն և հիւպատոսարանների ներկայացուցիչները:

—Լրագիրներին Բէլգրադից հեռագրում են, յունիսի 11-ին, որ թագաւորական հրամանով նեղքին գործերի մինիստրին լիազօրութիւն է տըրվում մամուլի ազատութեան սահմանափակման մասին սկուպշտինայում մէկ օրինագիծ ներկայացնել:

—«Բէյտերի ընկերութեան» Ալէքսանդրիայից ստացած տեղեկութիւնների համեմատ, Արաբի-փաշա պատասխանելով սուլթանի հեռագրին, պատրաստակամութիւն յայտնեց հեռանել նորին մեծութեան հրաւէրին և Կ. Պոլիս գնալ, բայց վախենում է, որ զօրքը չի թողնի նրան դուրս գալ երկրից:

—«Times» լրագրին Կ. Պոլսից հեռագրում են յունիսի 6-ից, որ 300 հէրցէգովինցի ընտանիքներ, որոնք թաղված են Զէրնօգորիայում, Բ. Դռնից թոյլատութիւն են խնդրում դաղթել Օսմանեան ցամաքի վրա:

—Վիէննայից գրում են «St.—James Gazette» լրագրին, որ չուտով Վիրաղեն կը ժամանի յունական թագաւորը: Ասում են, որ Գէորգ թագաւորը մտածում է հրաժարվել գահից յօգուտ Սպարտեան դքսի: Ոչ ոքի համար գաղտնիք չէ, որ թագաւորը վաղուց արդէն յունական թագի ծանր բեռը իրան համար շատ ծանր է համարում և շատ է ցանկանում վերադառնալ Դանիա, ուր նա նորերումս իրան համար մի պալատ գնեց:

## XXX.

Աղայ-Մամադ-խանը դեռ Գանձակից չէր անցել, Թիֆլիսը արդէն սարսափի մէջ էր գտնվում: Հերակլը հրաւիրեց իր ազնուականներին, որ պատրաստվեն թշնամու առաջը առնելու: Բայց նրա հրաւէրքին ոչ ոք ուշադրութիւն չը դարձրեց: Ազնուականները զբաղված էին իրանց քէֆերով: Նրան օգնութեան հասաւ միայն Իմերեթիայի Սօլոմոն իշխանը մի քանի հազար հոգով:

Բայց պէտք է ասած, որ Հերակլի երկչոտութիւնը սաստիկ վհատեցրեց նրա զօրքերին: Նա իր ընտանիքը Թիֆլիսից տեղափոխեց Վրաստանի խորքերում: Այդ տեսնելով, նրա զօրապետները և զօրքերը նոյնը խնդրեցին, որ իրանց ընտանիքները հեռացնեն, յետոյ կը դան պատերազմելու: Բայց գնացողը այլ ևս յետ չը դարձաւ: Եւ այսպէս, դեռ թշնամուն չը հանդիպած, զօրքերի մեծ մասը ցրիւ եկաւ:

Իր մօտ մնացած զօրքերով Հերակլը դուրս եկաւ Թիֆլիսից, և Ղազախի Ինջայ կոչված գետի մօտ բանակ դնելով, սպասում էր թշնամուն: Բայց երբ լսեց, որ Աղայ-Մամադ-խանը արդէն անցաւ Գանձակից, նա թողեց իր դիրքը, և վերադառնալով կրկին մտաւ քաղաքը:

Նա սկսեց կարելւոյն չափ ամրացնել քաղաքը: Այստեղ նրան օգնութեան եկած իմերէլները քաղցածութիւնից սկսեցին, նախքան թշնամու աւարառութիւնը, իրանք կողոպտել քաղաքացիներին:

1795 թ. սեպտեմբեր ամսի 12-ին Աղայ-Մամադ-խանը հասաւ Սօղանլուղ գիւղի մօտ, և գիշերը այնտեղ բանակ դնելով, վաղ-առաւօտեան յարձակվեցաւ Թիֆլիսի վրա: Հերակլը դուրս եկաւ նրա առաջ, բայց մի փոքրիկ ճակատամարտից յետոյ վրացիները ջարդվեցան, և փախչելով մտան քաղաքը:

Այդ միջոցին պարսից զօրքերի մի մասը Մէլիք-Մէջլումի առաջնորդութեամբ Սօլոլակի կողմից, իսկ միւս մասը իրա՝ Աղայ-Մամադ-խանի առաջնորդութեամբ բաղանիքների կողմից, նոյնպէս մտան քաղաքը: Հերակլը Հաւլաբարի կամուրջով մի ջօրեպանի հետ փախաւ դէպի Կախեթիայի կողմերը, թաղվեցաւ լեռների մէջ: Իսկ նրա աւելի ևս երկչոտ զօրքերը բոլորը ցիրուցան եղան:

Անպաշտպան քաղաքը մնաց գազանաբարոյ պարսիկների ձեռքում: Ամբողջ ութն օր շարունակվում էր կոտորածը և աւարառութիւնը: Աղայ-Մամադ-խանը, 12 հազար գերիներ իր հետ առնելով, հեռացաւ աւերակ քաղաքից: Մէլիք-Մէջլումը առաց իր վրէժը Հերակլ իշխանից, բայց նրա անդթութիւնը ոչինչով արդարացնել չէր կարելի: Մինչև այսօր Հաւլաբարի հին կանանց բերանում կարդացվում է մի այսպիսի անէծք:

«Մէլիք-Մէջլումը չուն դառնայ,
«Ջաւատ-խանը—պատիկ կուճի,
«Մէլիք-Մէջլումի ազգէմէն
«Թող չը մնայ մէկը Շուշի...

Որովհետև Աղայ-Մամադ-խանը իր յաղթութիւնով առաւել պարտական էր Մէլիք-Մէջլումին, ճանապարհին, հէնց առաջին իրկանում, հրամայեց իր զօրապետներին, որ աւարից նրա մարդիկների համար բաժին հանեն, ասելով, «քրիստոնեային պատկանածը քրիստոնեային տուեցէք»: Մէլիք-Մէջլումի ձիաւորները իրանց եափունջիները տարածեցին գետնի վրա, և պարսից զօրքերը որքան խաչեր, եկեղեցական անօթներ և զգեստներ կողոպտել էին Թիֆլիսի եկեղեցիներից, բոլորը թափեցին նրանց եափունջիների վրա: Մէլիք-Մէջլումը այս բոլորը յետ ուղարկեց Թիֆլիս, բայց դրանով չը կարողացաւ գրաւել Թիֆլիսեցիների սիրտը...

Շահը շնորհեց Մէլիք-Մէջլումին այդ երեք արտօնութիւնները: 1. երբ և կամենայ, կարող է անարգել կերպով եկ և մուտ գործել իր մօտ. 2. ինչ որ խնդրելու լինի, նրա կամքը կը կատարվի. 3. արքունի գանձարանը նրա տրամադրութեան ներքոյ կը լինի:

Բայց Մէլիք-Մէջլումը այն աստիճան հպարտ և անշահասէր երիտասարդ էր, որ Շահից ուրիշ ոչինչ չը պահանջեց, միայն Թիֆլիսը աւերակ դարձնելուց յետոյ, խնդրեց նրա օգնութիւնը Շուշի բերդը նոյնպէս կործանել, Իբրահիմ-խանին ոչնչացնել և աւելի հաստատութիւն տալ Ղարաբաղի մելիքների իշխանութեանը:

Շահը յօժարվեցաւ ուղղակի գնալ Ղարաբաղ, Շուշին գրաւելու, և Մէլիք-Մէջլումի ցանկութիւնները կատարելու համար: Բայց դժբախտաբար այդ միջոցներում Ղանդահարի և Հերաթի կողմերում խռովութիւններ ծագեցան, և նա ստիպվեցաւ չասպել դէպի Պարսկաստան ապրստամբութիւնները զսպելու համար: Նա յանձնեց Ջաւատ-խանին և Մէլիք-Մէջլումին սպասել, խոստանալով, որ շուտով կը վերադառնայ:

Ջաւատ-խանը Մէլիք-Մէջլումի հետ գնացին Գանձակ, իսկ Շահը ուրիշ ճանապարհով դիմեց դէպի Պարսկաստան:

Թիֆլիսը աւերակ դառնալուց 25 օրից յետոյ, Հերակլը մտաւ մոխիր դարձած քաղաքը:

(Կը շարունակվի)

---

օգնութեամբ, այլ պարսից Շահերի շնորհիւ: Այդ էր պատճառը, երբ Աղայ-Մամադ-խանը անցաւ Երասխ գետը, և հրաւէր կարդաց Ղարաբաղի մելիքներին, խոստանալով, եթէ կը միանան իր հետ, նա կը ոչնչացնէ Իբրահիմ-խանին և կը հաստատէ նրանց իրանց հայրենական իշխանութիւնների մէջ,—բոլոր մելիքները մերժեցին Շահի հրաւէրը, միայն Մէլիք-Մէջլումը միացաւ նրա հետ:

Պէտք է խոստովանվել, որ բացի ընդհանուր շահերից, Մէլիք-Մէջլումը ունէր և իր նեղ անձնական հաշիւները ևս: Նա հին թշնամի էր Իբրահիմ-խանի հետ. նա նոր թշնամացել էր Հերակլ իշխանի հետ. Աղայ-Մամադ-խանի ձեռքով կամենում էր պատժել, թէ առաջինին և թէ երկրորդին:

Բայց Շուշի բերդի պաշարումը երկար տևեց: Այդ բերդը, որ Ղարաբաղի մելիքութիւնների քայքայմանը պատճառ դարձաւ, այժմ նոյն մելիքները նոյն բերդի միջից պատերազմում էին պարսից Շահի դէմ, որը խոստանում էր կրկին վերանորոգել նրանց վաղեմի իշխանութիւնը, եթէ կը թողնեն Իբրահիմ-խանին և կանցնեն իր կողմը:

Ժամանակ չը կորցնելու համար, Մէլիք-Մէջլումը խորհուրդ տուեց Շահին թողնել Շուշի բերդի պաշարումը, ասելով, թէ աւելի նպատակայարմար կը լինի նախ գնալ Թիֆլիսը գրաւել, իսկ Շուշին այնուհետև ինքն իրան անձնատուր կը լինի:

Աղայ-Մամադ-խանին հաւանական երևեցաւ Մէլիք-Մէջլումի խորհուրդը, նա իր զօրքերի մի մասը թողեց Շուշի բերդի մօտ, իսկ մնացածը իր հետ առնելով, դիմեց դէպի Թիֆլիս: Նրան առաջնորդում էին Մէլիք-Մէջլումը և Գանձակի Ջաւատ-խանը:

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կակաղների համար ինստիտուտ Փարիզում։ «Journal des Debats» լրագրի խօսքերով, այս օրերս ժողովրդական կրթութեան վրա հսկող Փարիզի քաղաքային խորհրդի յանձնաժողովը ներկայ էր մի շատ հետաքրքիր հարցաքննութեանը։ Կակաղների ինստիտուտի դիրեկտօր, դոկտօր Շերվէն, ներկայացրեց յանձնաժողովին ինչից մինչև տասերեք տարեկան հասակի երկսեռ երիտասարդների մի խումբ, որոնք առաջ կակաղներ էին։ Յանձնաժողովը այդ երիտասարդներին քննութեան ենթարկեց երեք շաբաթ առաջ։ Այժմ նրանք նորից ներկայացան յանձնաժողովի առաջ և այդ վերջինը մեծ ուրախութեամբ տեսաւ, որ այդ բոլոր անձինքը, որոնք առաջ ոչ մի խօսք չէին կարողանում ուղիղ արտասանել, խօսում էին այժմ պարզ, հասկանալի և բոլորովին ազատ։ Աչքի առաջ ունենալով երեք շաբաթվայ ընթացքում հասած այդպիսի հետևանքին, յանձնաժողովը միաձայն յայտնեց իր շնորհակալութիւնը դոկտօր Շերվէնին, որը ամենափառաւոր կերպով ապացուցեց իր սիստեմայի նպատակայարմարութիւնը։ Աղքատ կակաղներին ուղղելու համար ինստիտուտում քաղաքային խորհրդի մի քանի ստիպենդիաներ կան։

* * *

Քսան և հինգ տարի սրանից առաջ։ 1857 թվի յունիսի 1-ը յիշատակութեան արժանի օր էր,—գրում են Վիէննայի «Presse» լրագրին։ 1556 թվին երկնքի վրա կօմետա էր շրջում։ Բազմաթիւ հին և նոր աստղաբաշխների հաշուով, այդ կօմէտան, որ երևեցաւ նոյնպէս 1624 թվին, պէտք է 1857 թվի յունիսի 1-ին անցներ երկրագնդի մօտով և պոչը դիպցներ նրան։ Բայց կօմէտան բոլորովին չերևեցաւ, գոնէ չը դիտուրված աչքի համար։ Բայց քսան և հինգ տարի առաջ, այն ժամանակվայ ժամանակագրութիւնների համեմատ, դէպի կօմետաներ ունեցած երկիւղը աւելի մեծ էր, քան թէ այժմ, և սպասելիք անցքը ամենքին սարսափեցնում էր։ Միայն պրուսական մի այնպիսի Հէրլից քաղաքում ուրախութեամբ սպասում էին աշխարհիս կործանմանը։ Ահա թէ ինչ էին գրում այն ժամանակ Հէրլիցից «Breslauer Zeitung» լրագրին։ «Հէրլիցի բնակիչները կը կործանվեն ուրախութեան և քէֆի մէջ։ Հիւրանոցի հնարագէտ տէրը ամեն աշխատանք գործ է դնում, որ իր քաղաքացիները սարսափելի կոմետային սպասելու միջոցին, վերջին ժամերը որքան կարելի է ուրախ անցնեն։ Ճիշդ որ, հիւրանոցի տէր Ֆրէնցել մէկ տօնախմբութիւն կազմեց, որ չարունակվում էր յունիսի 1-ին ամբողջ օրը։ Այդ տօնախմբութեան պրոգրամն հետևեալն էր. տօնախմբութիւնը պէտք է սկսվեր հենց յունիսի 1-ը կանգնելու բոպէից, այսինքն գիշերվայ 12 ժամից լեռների լուսաւորութեամբ և դեղեցիկ հրախաղութեամբ, իսկ պէտք է վերջանար յունիսի 2-ին գիշերվայ ժամի 12-ին, այսինքն այն բոպէին, երբ պէտք է աշխարհս կործանվեր։ Այդ օրվայ ընթացքում հիւրանոցում և նրա մօտ գտնվող այգում մուտքը անվարձ էր, փող չէին պահանջում, բայց կամաւոր նուէրները երախտագիտութեամբ ընդունվում էին։ Այդում ամբողջ օր երաժշտութիւն էր ածվում։ Կօմետան նկատելու համար, Ֆրէնցել բերել տուեց փարիզից այդ նպատակով հնարված գործիքները, որի մէջ նայելու համար հասարակութիւնից փող էր առնում։ Աւելորդ է ասել, որ այդ տօնախմբութիւնը բարեյաջող կերպով անցաւ, և ամենի սպասածի հակառակ, աշխարհի վերջը չեկաւ։»

## «ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի։ Բալտայի մէջ յունիսի 15-ին սկսվեցաւ դատաստանը հրէական անկարգութիւններին մասնակցողների մասին։ Յանցաւորներից վեցը դատապարտված են մասամբ չորս տարի տաժանակիր աշխատանքներին ենթարկվելու և մասամբ երեք ամիս բանտարկութեան տանը աշխատելու։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 17 յունիսի։ Կառավարական հաղորդութիւն. Սենատի մէջ փետրվարին դատվող պետական յանցաւորների համախոհներին հետախուզութիւնները միջոց տուին բացի Կիևվի և Օդէսայի մէջ արած կալանաւորութիւններից, Ս. Պետերբուրգի և Մոսկվայի մէջ կալանաւորել նշանաւոր պետական յանցաւորներին, որոնք առաջվայ գործերով էլ յայտնի են. նրանց վրա ունեցած հսկողութիւնը այն համոզմունքի հասցրեց, որ մի խումբ Ս. Պետերբուրգի մէջ պատրաստվում է նոր յանցանքներ գործել։ Յունիսի 5-ին, փնտռելով այդ խումբի անդամներին, պոլիցիան կալանաւորեց 18 անձանց, որոնց եօթը կեղծ անցագիրներ ունէին և յայտնի են իբրև գաղտնի ընկերութեան անդամներ։ Այն բնակարանի մէջ, որտեղ նրանք հաւաքվում էին, դինամիտի և ճայթող առարկաների արհեստանոց գտնվեցաւ։ Մոսկվայի հետ սկսած յարաբերութիւնները միջոց տուին մի քանի անձանց կալանաւորել Մոսկվայի մէջ։ Այնու ամենայնիւ այն տեղից կարողացան փախչել երեք անձինք կեղծ անցագիրներով, թողնելով բնակարանի մէջ գաղտնի տպարանի պատկանելիքներ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկուշաբթի օրից, յունիսի 14-ից, Թիֆլիսի Սերգիեվսկայա փողոցում, Շահպարոնեանցի տանը № 4, բացվում է ՄԱՆԿԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ։

Դրադարանը բաց կը լինի առաւօտեան 9 ժամից, մինչև 6 ժամ երեկոյեան։

3—3 (Ե. Հ. Շ.)

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գօլովինսկի պրօսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

ԳԷՈՐԳԵԱՆ ՁԵՄԱՐԱՆԻ նախկին աշակերտներից մէկը՝ կամենում է այս ամառուայ ընթացքում, հայոց լեզուի, հայոց պատմութեան, հայոց աշխարհագրութեան և տարրական ուսման դասեր տալ։

Ցանկացողք կարող են դիմել „ՄՇԱԿԻ“ խմբագրատուն։ 2—3

Ի նկատի ունենալով, որ ծախվում են ԾԽԱԽՈՏՆԵՐ, որոնց տուփերը ԿԵՂԾՎԱԾ են և իմ գործարանի ծխախոտի տուփերին են նմանեցրած, պատիւ ունիմ խնդրել յարգոյ հասարակութենից այսուհետև իմ գործարանի արդիւնաբերութիւնը գնելու ժամանակ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ դարձնել իմ ԱՆՈՒԱՆ և ԱԶԳԱՆՈՒԱՆ վրա, որ տրվում է մեծ տառերով ռուսերէն, հայերէն, վրացերէն և թուրքերէն լեզուներով։ Մի և նոյն ժամանակ աւելացնում եմ, որ ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ ծխող հասարակութեանը բաւականութիւն տալու համար ստանում եմ ԱՄԵՆԱԼԱՒ ԾԽԱԽՈՏ թիւրքաց ամենալաւ պլանտացիաներից ինչպէս ԿԷՕԲԷԿ ենաջէի, ՍԱՄՍՕՆ և այլն նոյնպէս և ամենալաւ ծխախոտ կովկասի գլխաւոր պլանտացիաներից.

ԲՕԶԱՐՋԵԱՆՑ.

1—2 (1)

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ, որ այժմ արդէն Մանգլիսուն է ապրում, յանձն է առնում պարապել երեխաների հետ՝ թէ արքունական և թէ հայոց ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ։

Պայմանները կարելի է առաջարկել հետևեալ հասցէով. Манглисъ, Габріэль Мирзоевъ, въ рощѣ, дача Марѳы Тимоѳѣевой.

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՄԻ ՕՐԻՈՐԴ, որ վերջացրել է Ռուսաստանի մէջ ԿԱՆԱՆՑ ԳԻՄՆԱԶԻԱՅԻ 8-դ դասատուները և գիտէ ֆրանսերէն և գերմաներէն ԼԵԶՈՒՆԵՐԸ, ԴԱՍԵՐ է տալիս։ Սալդատսկի բազար, Պոլիցէյսկայա փողոց տուն № 15։

3—3 (2)

ՄԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԻ երիտասարդ կամենում է ԾԱՌԱՅ մտնել մի տան մէջ Թիֆլիսում, կամ Թիֆլիսից դուրս։

Նախապատուութիւն է հայերի մօտ ծառայել։

Հասցէն թողնել „Մշակի“ խմբագրութեան մէջ։

3—5

Թողնելով Թիֆլիս ընդմիշտ, ԱՆԳԼԻԱԿԱՆ մագազինի տէրը ԾԱԽՈՒՄ է այժմ իր ամբողջ ապրանքը ԴՈՐԾԱՐԱՆԱԿԱՆ ԳՆԵՐԻՑ էժան, իսկ ապրանքների մեծ մասը ԿԻՍԱԳՆՈՎ։

Օգուտ քաղեցէք այդ հազուագիւտ դէպքից։

Ուրիշ այդ տեսակ դէպք ներկայանալու չէ Թիֆլիսի և նրա շրջակաների բնակիչներին։

3—3

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվօյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ռէվոլվէրի, սիգար Ռէնգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) զուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանդալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօր. միս կարելու մաշինայ. Անգլիական ութմներ, Բրիտանսկի չայնիկներ, կաֆէնիկներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—ջուր մաքրելու, կրսխմալ կարօբկէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուտիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պղսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շոգի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, չչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թել (бумага) մատոկի կօճի և շալէ (парусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոլանտերէյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կոտր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻՔԱՅԷԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

75—180

Միջի փողոց, կաթոլիչեսկայա փողոցի անկիւն № 13.

## КВАРТИРЫ

Въ 4 и въ двѣ комнаты отдаются въ наемъ, на Католическомъ переулкѣ домъ № 11, противъ дома *Андроникова*.

Желающіе могутъ взять весь домъ въ АРЕНДУ.

Справляться тамъ-же отъ 9 до 12 часовъ утра и отъ 5 до 7 часовъ по полудни.

3—3 (2)

ՍՏԱՑՎԱԾ Է գրելու թուղթ առաջին տեսակի 4 ր. 50 կ. օզման, բրինձ 6, 8 և 9 կ. ֆունտը, խինայի գինի ջերմի դէմ 1 ր. 40 կ. շիշը, փոշի տարափոխիկ հիւանդութեան դէմ, լուացքի և սամովար սրբելու համար։ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷՅ։ Նոյն տեղը լէպէշկաներ, ցիտրադ և շերբետ ծարաւի դէմ։ ծաձկոցներ 4 ր., շօկոլադ երկու բաժակի համար 5 կոպէկ։ երկաթէ մահճակալներ 8 ր. և այլն։

2—10

Дозволено цензурою, Тифлисъ, 18 Іюня 1882 года.

Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час. Лор.-Мелик. ул., каз. д.